ՏԵՂԵԿԱՑՈՒՄ

Սարչապետ համայնքի ավագանու արտահերթ նիստի վերաբերյալ

Համայնքը	**Միջոցառման անվանումը**	**Օրը**	**Ժամը**	**Անցկացման վայրը**
Սարչապետ	Ավագանու արտահերթ նիստ	26.04.2021թ.	14:30	Սարչապետի համայնքապետարանի վարչական շենք, ավագանու նստավայր (ՀՀ, Լոռու մարզ, գ.Սարչապետ, փ.1, շենք 67)

Օ Ր Ա Կ Ա Ր Գ

2021թ. ապրիլի 26-ին՝ ժամը 14:30-ին Սարչապետի համայնքապետարանի նիստերի դահլիճում կայանալիք համայնքի ավագանու արտահերթ նիստի

գ.Սարչապետ **23.04.2021թ.**

1. Սարչապետ համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 26-ի արտահերթ նիստի օրակարգը հաստատելու մասին: (Զեկ. Բ.Բարոյան)
2. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին: (Զեկ. Ա.Մարտիրոսյան)
3. Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա ստանալու և <<ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի Սարչապետ բնակավայրի 2-րդ փողոցի տուֆով բարեկարգում>> սուբվենցիայի հայտին համաձայնություն տալու մասին: (Զեկ. Ա. Մարտիրոսյան)

ՆԱԽԱԳԻԾ

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2021 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 26-Ի
ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ
ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ կետով՝

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Հաստատել Սարչապետ համայնքի ավագանու 2021 թվականի ապրիլի 26-ի թիվ 04 արտահերթ նիստի հետևյալ օրակարգը `

1. Համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական օգնություն հատկացնելու մասին: (Զեկ. Ա. Մարտիրոսյան)

2. Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիա ստանալու և <<ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի Սարչապետ բնակավայրի 2-րդ փողոցի տուֆով բարեկարգում>> սուբվենցիայի հայտին համաձայնություն տալու մասին: (Զեկ. Ա. Մարտիրոսյան)

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՄԱՅՆՔԻ ՍՈՑԻԱԼԱՊԵՍ
ԱՆԱՊԱՀՈՎ ԸՆՏԱՆԻՔՆԵՐԻՆ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ
ՀԱՏԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. *ԱՆԺԵԼԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետով, համայնքի ավագանու 2018 թվականի հունվարի 15-ի <<Հայաստանի Հանրապետության Լոռու մարզի Սարչապետ համայնքի կամավոր խնդիրները դրանց լուծմանն ուղղված սեփական լիազորությունները և դրանց իրականացման կարգը սահմանելու մասին>> թիվ 08-Ա որոշմանը համապատասխան, հիմք ընդունելով ստացված դիմումները և համայնքի զոհված զինծառայողների, զինծառայողների ընտանիքների սոցիալական պաշտպանվածության բարելավման, պատերազմի վետերանների սոցիալական խնդիրների լուծման, հաշմանդամների, կերակրողին կորցրած ընտանիքների, սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման վերաբերյալ դիմումները քննարկող հանձնաժողովի եզրակացությունը՝

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Բարելավել համայնքի բնակիչների դիմումները և համայնքի բյուջեից նրանց ընտանիքներին հատկացնել սոցիալական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Համայնքի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո 10-օրյա ժամկետում հատկացված գումարները տրամադրել բնակիչներին:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

Հավելված

ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի ավագանու

2021 թվականի _____-ի N _____ -Ա որոշման

ՑՈՒՑԱԿ ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԲՅՈՒՋԵԻՑ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՑՈՂ ԲՆԱԿԻՉՆԵՐԻ

1. Հարությունյան Սպարտակ Աշոտի (բնակավայր Պրիվոլնոյե) 30 000-(երեսուն հազար) ՀՀ դրամ (սոց. օգնություն):

30 **000 (երեսուն հազար) ՀՀ դրամ**:

ՍԱՐՉԱՊԵՏԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ՝

_____ ԱՆԺԵԼԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ

(ստորագրություն) (անուն, ազգանուն)

ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԵՎ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ
ՍՈՒԲՎԵՆՑԻԱ ՍՏԱՆԱԼՈՒ ԵՎ <<ՀՀ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶԻ ՍԱՐՉԱՊԵՏ
ՀԱՄԱՅՆՔԻ ՍԱՐՉԱՊԵՏ
ԲՆԱԿԱՎԱՅՐԻ 2-ՐԴ ՓՈՂՈՑԻ
ՏՈՒՖՈՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ>>
ՍՈՒԲՎԵՆՑԻԱՅԻ ՀԱՅՏԻՆ
ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ
ՄԱՍԻՆ

/Ձեկ. *ԱՆԺԵԼԱ ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ*

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարան մասին>> Հայաստանի Հանրապետության օրենք 18-րդ հոդվածի 1-ին մասի 25-րդ կետով և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 16-ի թիվ 1708-Ն որոշմամբ.

ՍԱՐՉԱՊԵՏ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ ՈՐՈՇՈՒՄ Է.

1. Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված <<ՀՀ Լոռու մարզի Սարչապետ համայնքի Սարչապետ բնակավայրի 2-րդ փողոցի տուֆով բարեկարգում>> սուբվենցիայի հայտին՝ համաձայն հավելվածի:

2. Ծրագրի իրականացման առնչվող այլ փաստաթղթերի ստորագրումը, դրանից բխող գործառույթների կազմակերպումը վերապահել Սարչապետ համայնքի ղեկավարին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ **ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ**

ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԻԾԸ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏԵՑ
ԲՈՐԻՍ ԲԱՐՈՅԱՆ

Հավելված N 3

ՀՀ կառավարության 2006 թվականի

նոյեմբերի 16-ի N 1708-Ն որոշման

Ձև

ՀԱՅՏ

Հայաստանի Հանրապետության համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացմանն ուղղված սուբվենցիաների

Ծրագրի անվանումը	*Սարչապետ բնակավայրի 2-րդ փողոցի տուֆով բարեկարգում*
Մարզ	*Լոռի*
Համայնքը /համայնքները	*Համայնքը՝ Սարչապետ* *Մասնակից բնակավայրերը՝ Սարչապետ*
Համայնքի /բնակավայրի հեռավորությունը մայրաքաղաք Երևանից, ինչպես նաև մարզկենտրոնից	*Երևանից՝ 176 կմ, մարզկենտրոնից՝ 68կմ*
Համայնքի /բնակավայրի բնակչությունը	*5991/2150 մարդ*
Սահմանամերձ, բարձր լեռնային համայնք /բնակավայրի	-
Համայնքի գլխավոր հատակագծի առկայություն	*ոչ*
Համայնքի բնակավայրի ենթակառուցվածքների վերաբերյալ հակիրճ տեղեկատվություն՝ հստակ նշելով՝ **- ջրամատակարարման և ջրահեռացման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը և ջրամատակարարման**	*Ջրամատակարարման և ջրահեռացման համակարգ - Սարչապետ համայնքի **Սարչապետ** բնակավայրում իրականացվում է խմելու ջրի կենտրոնացված ջրամատակարարում, որից օգտվում է բնակչության 90%-ը, ջրամատակարարման տևողությունը՝ օրվա ընթացքում մինչև 12-24 ժամ: Բնակավայրում չկա ջրահեռացման համակարգ:* *- Գազամատակարարման համակարգ - Գազամատակարարումն իրականացվում է <<Գազպրոմ*

տևողությունը, **- գազամատակարարման համակարգից օգտվող համայնքի բնակչության տոկոսը,** **- ոռոգման համակարգից օգտվող բնակչության տոկոսը և համայնքում գյուղատնտեսական հողերից ոռոգվող հողատարածքների տոկոսը,** **- լուսավորության համակարգի առկայությամբ փողոցների տոկոսը՝ համայնքի ընդհանուր փողոցների մեջ և նշել էներգախնայող և ԼԵԴ լուսավորություն է, թե ոչ**	*Արմենիա>> ՓԲԸ-ի կողմից: Բնակավայրի ամբողջ տարածքով իրականացվում է կենտրոնացված գազամատակարարում, որից օգտվում է բնակավայրի առկա տնային տնտեսությունների 100%-ը: Գազասպառման բաժանորդների թիվը կազմում է՝ 391:* *- Ոռոգման համակարգ-բնակավայրում ոռոգման համակարգ չկա:* *- Լուսավորության համակարգ – Բնակավայրի փողոցները 100%-ով ապահովված են գիշերային լուսավորութամբ, տեղադրված են 410 լուսատուներ ԼԵԴ լամպերով:*
Ծրագրի ընդհանուր նկարագրությունը և դրա իրականացման անհրաժեշտությունը	*Սարչապետ համայնքի Սարչապետ բնակավայրի փողոց 2 հատվածում, 1000 մ երկարությամբ և 5-6 մետր լայնությամբ նախատեսվում է փուփով բարեկարգում, ճանապարհի մի կողմից ջրահեռացման համակարգի կառուցում: Նշված փողոցում է գտնվում բնակավայրի եկեղեցին, դպրոցը, ինչպես նաև բնակավայրի նոր գերեզմանատներից մեկը: 2020 թվականի ընթացքում բնակավայրի համագյուղացի բարերարների կողմից նշված փողոցում անցկացվել է խմելու ջրի ջրագիծ, իրականացված աշխատանքներից հետո ճանապարհը հատկապես անձրևներից և ձնհալներից հետո դառնում է անանցանելի, իսկ խճապատման միջոցով փոսալցումն ու հարթեցումը ժամանակավոր արդյունք են տալիս, ուստի կարիքներից ելնելով և նկատի ունենալով որ նշված ճանապարի վրա է գտնվում բնակիչների համար կարևորագույն սրրուկտուրաներ, որտեղ առկա է բնակչության մեծ շարժ, խիստ կարևորվում է ճանապարհի կառուցումը, ինչպես նաև ծրագրի իրագործումը նպատակ է հետապնդում քաջալերել բնակիչներին հետագա ներդրումների համար: Ծրագրի խնդիրն է համայնքի ներհամայնքային ճանապարհների բարեկարգում, բնակիչների համար բարենպաստ պայմանների ստեղծումը, կենսամակարդակի բարձրացում, բնակիչների ներգրավում համայնքի զարգացմանը:*

Ծրագրի ակնկալվող արդյունքները, որոնց միջոցով պետք է հասնել ծրագրի իրականացման նպատակին	• *Բնակավայրի համար կարևորագույն փողոցներից մեկի բարեկարգումից հետո երկար տարիների շահագործում,* • *2-րդ փողոցում բնակվող աշակերտներին դպրոց հաճախելու համար բարեկարգ և մաքուր ճանապարհով ապահովում,* • *թաղումների արարողությունների մասնակիցների և հարազատների շիրիմներին այցելողների համար բարեկարգ ճանապարհով ապահովում,* • *ջրահեռացման համակարգի առկայություն*
Ծրագրի արդյունքներին հասնելու գործողությունները և միջոցառումները	• *Համայնքի 2021 թվականի ՏԱՊ-ում ծրագրի ներառում, համայնքի բյուջեում՝ ֆինանսական միջոցների նախատեսում* • *Նախագծանախահաշվարկային փաստաթղթերի պատվիրում* • *Գնման աշխատանքների կազմակերպում* • *Մրցույթում հաղթող կապալառու կազմակերպության հետ պայմանագրի կնքում* • *Շինարարության աշխատանքների կազմակերպում* • *1000 մ երկարությամբ ճանապարհի տուֆով սալարկում, ընդամենը՝5500-6000քմ* • *800 մետր ջրահեռացման համակարգի կառուցում* • *Աշխատանքների վերահսկողություն* • *Ավարտական ակտի կազմում*
Ծրագրի իրականացման արդյունքում համայնքին սեփականության իրավունքով պատկանող հիմնական միջոցների արժեքի ավելացում բացառությամբ բազմաբնակարան շենքերի ընդհանուր բաժնային սեփականության գույքի	*Վերանորոգվող ճանապարհը հանդիսանում է Սարչապետ համայնքի սեփականությունը, ճանապարհի վերանորոգման արդյունքում համայնքի հիմնական միջոցների արժեքը կավելանա 57 000 000 ՀՀ դրամով:* *Ծրագրով նախատեսվող ծախսերը կապիտալ բնույթի են և կիրականացվեն Սարչապետ համայնքի 2021թ-ի բյուջեի ֆոնդային մասով:*
Ծրագրի ազդեցությունը համայնքի և շահառուների վրա	*Ծրագրի շահառուներ են հանդիսանում Սարչապետ բնակավայրի թվով 2150 բնակիչ, 553 տնային տնտեսություն:* *Ծրագրի իրագործման ազդեցությունը՝ մասնակցային կառավարում, <<Բնակիչների բյուջե>> տերմինի կյանքի կոչում, բարերարների ներգրավում համայնքի զարգացմանը, բնակիչների կենսապայմանների բարելավում:*
Նշել ծրագրի իրականացման ընթացքում ստեղծվող ժամանակավոր և հիմնական	*Ծրագրի իրականացման ընթացքում շինարարական աշխատանքները կատարելու համար կստեղծվի 6-10*

աշխատատեղերի քանակը և դրանց նկարագրությունը	*ժամանակավոր աշխատատեղեր:*
Համայնքի նախորդ տարվա բյուջեն և բյուջեի կատարողականը	*Նախորդ տարվա բյուջեն՝ 224408.6 դրամ.* *Ներկայացնել նախորդ տարվա բյուջեն, ծախսերը և կատարողականը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:*

	Պլանը	***Փաստացին***	***Տոկոսը***
Ընդամենը՝ համայնքի բյուջեի մուտքերը */հազ. դրամ/*	224408.6	218301.5	97.2
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտները *այդ թվում՝*	189671.9	183564.8	96.8
-Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	158817.4	152934.3	96.2
- Սեփական եկամուտներ	38147.3	31018.7	81.3
-Ֆոնդային բյուջեի մուտքեր	81254.5	74367.2	91.5
-Ֆոնդային բյուջեի եկամուտներ	46517.8	39630.6	85.2
Ֆոնդային բյուջեի տարեսկզբի ազատ մնացորդ	34736.7	34736.7	100
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, *որից՝*	224408.6	175535.2	78.2
- Վարչական բյուջեի ծախսեր	158817.4	121450.6	76.4
-Ֆոնդային բյուջեի ծախսեր	81254.5	63084.5	77.6
Համայնքի ֆոնդային բյուջեի փաստացի ծախսերը, *որից՝*	81254.5	63084.5	76.3
- ճանապարհաշինություն	1000.0	0	0

Ընդհանուր բնույթի հանրային ծառայություն	19677.9	18347.7	93.2
- ջրամատակարարում			
- փողոցային լուսավորություն			
-պաշտպանություն			
-մշակույթ	61576.6	45447.2	73.8
**Գույքի օտարումից մուտքեր*	-1000.0	-710.4	71

Համայնքի ընթացիկ տարվա բյուջեն

295308.2 *դրամ.*

Ներկայացնել ընթացիկ տարվա կանխատեսվող եկամուտները, պլանավորված ծախսերը՝ առանձնացնելով բյուջեի վարչական և ֆոնդային մասերը, իսկ բյուջեի ֆոնդային մասից պլանավորված ծախսերը ներկայացնել առանձին բացվածքով:

	Պլանը
Ընդամենը՝ համայնքի բյուջեի մուտքեր /հազ. դրամ/ պլանավորում	295308.2
Ընդամենը՝ համայնքի բյուջեի եկամուտների պլանավորում *այդ թվում՝*	252541.9
- Վարչական բյուջեի եկամուտներ, որից՝	203349.9
- սեփական եկամուտներ	46917.4
- Ֆոնդային բյուջեի մուտքեր	105498.9
- Ֆոնդային բյուջեի եկամուտներ	62732.6
- Տարեսկզբի ազատ մնացորդ	42766.294
Ընդամենը՝ համայնքի բյուջեի ծախսեր, *որից՝*	295308.2
- Վարչական բյուջեի ծախսեր	203349.9
-Ֆոնդային բյուջեի ծախսեր	105498.9

	Համայնքի ֆոնդային բյուջեի պլանավորված ծախսերը, *որից՝*	105498.9
	- *ընդհանուր բնույթի հանրային ծառայություն*	19000.0
	- *ճանապարհային տրանսպորտ*	5200.0
	-ջրամատակարարում	0
	- *մշակույթ*	62298.9
	կրթություն	20000.0
	** Գույքի օտարումից մուտքեր*	-1000.0
Համայնքի ընթացիկ տարվա բյուջեի նախագծով կանխատեսվող բյուջետային մուտքերի (ներառյալ ֆինանսական համահարթեցման դոտացիայի գծով կանխատեսվող մուտքերը) հաշվին նշված ծրագրի իրականացման անհնարինության հիմնավորումը (համապատասխան հաշվարկներով	***Համայնքի 2021թ-ի բյուջեի նախատեսված ընդհանուր մուտքերը կազմում է 295308.2 հազ. դրամ, որից վարչական բյուջեի մուտքեր՝ 203349.9 հազ.դրամ: Ծախսերը նախատեսվել են 295308.2 հազ. դրամից*** ***Որից՝*** ***Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ 131950.0 հազ. դրամ /իր մեջ ներառում է ապարատի պահպանման՝ աշխատավարձ, գործուղումներ, կոմունալ վճարումներ, կապ, տրանսպորտային նյութեր, համակարգչային ծառայություններ և այլ ծախսեր/*** ***Պաշտպանություն 100.0 հազ.դրամ:*** ***Տնտեսական հարաբերություններ 17600.0 հազ. դրամ /իր մեջ ներառում է գյուղատնտեսության, տրանսպորտի և ճանապահային բնագավառում իրականացվելիք ծախսերը/*** ***Շրջակա միջավայրի պաշտպանություն 5350.0 հազ. դրամ /իր մեջ ներառում է աղբահանության և սելավատարերի մաքրման, կեղտաջրերի հեռացման ծախսեր/*** ***Կոմունալ ծառայություն – 6820.0 հազ.դրամ /իր մեջ ներառում է ջրամատակարարման և լուսավորման ծառայություններ/***	

	Մշակույթ – 72898.9 հազ. դրամ *Կրթություն – 31500.0 հազ. դրամ /ներառում է նախադպրոցական և միջնակարգ կրթության բնագավառի ծախսեր/* *Սոցիալական պաշտպանություն – 3000.0 հազ. դրամ /համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին աջակցություն/* *Պահուստային ֆոնդ՝ 26089.3 հազ. դրամ :* *Նշված ծախսերի հետ զուգահեռ միայն բյուջեով հնարավոր չէ իրականացնել Սարչապետ համայնքի << Սարչապետ բնակավայրի փողոց 2 ճանապարհի տուֆով բարեկարգում >> ծրագիրը:*
Ծրագրի ընդհանուր բյուջեն, այդ թվում՝ - շինարարական օբյեկտների նախագծման արժեքը _____ դրամ, - նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ _____ դրամ, - տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ _____ դրամ, - հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ _____ դրամ, - գոյություն ունեցող շենք-շինությունների տեխնիկական վիճակի վերաբերյալ փորձաքննության ծառայության արժեքը՝ _____ դրամ, ինչպես նաև առանձին ներկայացնել հասարակական շենքերի և բազմաբնակարան	*57 000 000 դրամ (100%)* - շինարարական օբյեկտների նախագծման արժեքը 1 710 000 դրամ, - նախագծանախահաշվային փաստաթղթերի պետական փորձաքննության ծառայության արժեքը՝ 100 000 դրամ, - տեխնիկական հսկողության ծառայությունների արժեքը՝ 1 054 500 դրամ, - հեղինակային հսկողության ծառայությունների արժեքը՝ 285 000 դրամ, Շինարարական աշխատանքների արժեքը՝ *53 850 500* դրամ:

շենքերի ընդհանուր օգտագործման գույքի կառուցման/նորոգման դեպքում՝ էներգախնայողության միջոցառումների արժեքը _____ դրամ	
Համայնքի կողմից ներդրվող մասնաբաժնի չափը	*7 951 500 դրամ (13.95%)*
Այլ ներդրողներ	*11 998 500 դրամ (21.05 %), համագյուղացի բարերարներ:*
Ծրագրի իրականացման տևողությունը	*Սկիզբը՝ 01.05.2021թ., Տևողությունը՝ 5 ամիս*
Ծրագրի ծախսերը	*Ծրագրի ընդհանուր ծախսը կկազմի **57 000 000** ՀՀ դրամ, ծախսերը կձևավորվեն համայնքի ֆոնդային բյուջեով նախատեսված 7 951 500 դրամի, համայնքի բարերարների կողմից ներդրվող 11 998 500 դրամի և պետության կողմից հատկացվելիք 37 050 000 ՀՀ դրամ սուբվենցիայի հաշվին: Միայն շինարարական աշխատանքների արժեքը կազմում է 53 850 500:*
Ամսաթիվ	*,,03,, մարտի 2021թ.*

Այլ տեղեկություններ ծրագրի մասին (նշել այն լրացուցիչ հանգամանքները, որոնք կարող են ցույց տալ ծրագրի կարևորությունը, ակնկալվող արդյունքների ազդեցությունը համայնքի և տարածաշրջանի զարգացման վրա, այլ հանգամանքներ, որոնք կարող են հաշվի առնվել ծրագիրը գնահատելու ընթացքում):

Համայնքի տնտեսական պատասխանատու

Հեռախոսահամարը, էլեկտրոնային փոստը

Աշխատակազմի քարտուղար՝ Անժելա Մարտիրոսյան, հեռ.՝ բջջ.՝ 093572204, աշխ.՝077867459, sarchapet.lori@mta.gov.am, ssarchapet@mail.ru

Համայնքի ղեկավար **Բորիս Բարոյան**

(անունը, ազգանունը)

Կ. Տ